ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի, ԺԱՄԸ 11_00_ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝ Դիանա Գասպարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական ղեկավարների**
- **ՀՀ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ՝**
  - **ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ՝ Կարեն Հակոբյանի**
  - **ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ՝ Ռաֆիկ Բոխյանի**
  - **ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ Գագիկ Խաչատրյանի**
  - **ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ Հովհաննես Մարգարյանի**
  - **ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի –Բաղրամյան տարածաշրջանի բաժանմունքի պետ՝ Դավիթ Պողոսյանի**

  - **ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն՝ Վահագն Արշակյանի**
  - **ՀՀ Արմավիրի մարզի <<Շենիկ >> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն՝ Սամվել Սարգսյանի**
  - **ՀՀ Արմավիրի մարզի <<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ Հովակիմ Հովակիմյանի**
  - **Միասնական սոցիալական ծառայության**

Արմավիրի տարածքային կենտրոնի տնօրեն՝ Սիմոն Թովմասյանի

- Միասնական սոցիալական ծառայության Վաղարշապատի տարածքային կենտրոնի տնօրեն՝ Ասթինե Ապիտոնյանի
- Միասնական սոցիալական ծառայության Բաղրամյանի տարածքային կենտրոնի տնօրեն՝ Արմեն Ասատրյանի
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի պետ՝ Արայիկ Ալեքսանյանի
- ՀՀ վիճակագրական կոմիտեի Արմավիրի մարզային վարչության պետ՝ Իշխան Սարգսյանի
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի պետ՝ Արսեն Խաչատրյանի
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Արթուր Շատվորյանի
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի պետ՝ Ալեքսան Մկրտչյանի
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մոնիթորինգի Արմավիրի մարզային կենտրոնի գլխավոր մասնագետ՝ Արզուման Տոնոյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2022 թվականի գործունեության և մարզի հետագա զարգացման ուղղությունների մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում 2022 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և 2023 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության մարզպետարանի ամենամյա աշխատանքային ծրագրի մասին

/ Լիաննա Հարությունյան– ՀՀ Արմավիրի մարզպետարանի
իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան /

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազությունից, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչությունից, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի

մարզային քննչական վարչությունից 2022 թվականի ընթացքում ստացված միջնորդագրերի, գրությունների և տեղեկատվության ներկայացման պահանջների քննարկման արդյունքների մասին

/ Լիաննա Հարությունյան– ՀՀ Արմավիրի մարզպետարանի
իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան /

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2022 թվականի արդյունքների մասին առ 12.12.2022թ. դրությամբ

/ Վարազդատ Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետարանի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2022 թվականի ընթացքում իրականացված սոցիալ–տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի արդյունքների և 2023 թվականի սուբվենցիաների տրամադրման հայտերի ներկայացման ընթացքի մասին

/Լիլիթ Մուշեղյան-
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետարանի Զարգացման ծրագրերի,
զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ/

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2022 թվականի ընթացքում իրականացված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման արդյունքների մասին

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյան/

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններում 2022 թվականի ընթացքում իրականացված մշտադիտարկումների և Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Սոնյա Բուդաղյան/

9. Հայտարարություններ՝

ա/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2023 թվականի հունվարի 1–ի դրությամբ անասնագլխաքանակի համատարած հաշվառում իրականացնելու վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արթուր Այվազյան/

բ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ոռոգման համակարգի խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արթուր Այվազյան/

գ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2023 թվականի բյուջեների հաստատման ընթացքի վերաբերյալ

/ Վարազդատ Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետարանի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

դ/ Սննդամթերքի փողոցային /բացօթյա/ առևտրի նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ

/ Ալեքսան Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության
սննդամթերքի անվտանգության տեսչական
մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի պետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ողջունելով նիստի մասնակիցներին, մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի նիստի օրակարգը:**

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 19–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 19–ի նիստի օրակարգը :**

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2022 թվականի գործունեության և մարզի հետագա զարգացման ուղղությունների մասին հաշվետվությունը: Ներկայացնելով հաշվետվությունը մարզպետը մասնավորապես նշեց, որ <<Ավարտին է մոտենում 2022 թվականը, հաշվետու տարի, որի համար ինքներս սահմանել էինք որոշակի թիրախներ,

ձևակերպել անելիքներ և հիմա պետք է մի պահ հետ նայենք, վերլուծենք և գնահատենք մեր աշխատանքը, արձանագրենք արդյունքները, կատարվածը պահպանենք, ընթացիկ աշխատանքները շարունակենք և սահմանենք նոր նպատակներ և նոր անելիքներ:

Տարին բավականին բարդ էր այն առումով, որ ինչպես գիտեք վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում Արմավիրի մարզում 2021թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններով տեղի ունեցավ համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում ձևավորվեցին թվով 7 խոշորացված համայնքներ: Չխոշորացվեց միայն Ֆերիկ եզդիաբնակ համայնքը: Թեպետ ընտրությունները տեղի ունեցան 2021թվականին, սակայն խոշորացված համայքնների ձևավորման բուն գործընթացն իրականացվեց 2022թվականին և տարվա առաջին մոտ 3 ամիսների ընթացքում ձևավորվեցին համայնքների աշխատակազմերը, իսկ տարվա երկրորդ կեսին արդեն տեղի ունեցան համայնքային ծառայության մրցութային գործընթացները: Այս ամենին զուգընթաց կազմակերպվեց և մարզում իրականացվեց տարածքային և տեղական ինքնակառավարում, որն այդքան էլ պարզունակ չէր: Դրան զուգահեռ խիստ ուշադրության կենտրոնում գտնվեց <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքով մարզպետին վերապահված ոլորտներում տարածքային կառավարման լիազորությունների իրականացման ամենօրյա հսկողությունը, միջոցներ ձեռնարկվեցին պետական և տարածքային կառավարման ներդաշնակ փոխգործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ: Մարզում վաղուց արդեն նշմարվել է գործընկերային, փոխադարձ հարգանքի և փոխօգնության տրամաբանությամբ ձևավորված հարաբերությունները, << Մարզի բոլոր խնդիրները մերն են և մենք ենք դրանց պատասխանատուն>> սկզբունքով: Վստահ եմ, որ առողջ հարաբերությունները արդյունավետ աշխատանքի առաջնային գրավականներից են:

Հայաստանի Հանրապետության համար այս դժվարին ժամանակներում, փրկությունը մեկն է. լինել միասնական, աշխատել և արարել օրնիբուն, լինել ժողովրդի կողքին: Որոշումներ կայացնելուց ղեկավարվել բացառապես օրենքով սահմանված կարգով, առաջնորդվել պետական և համայնքային շահի գերակայության գիտակցմամբ, լինել ազնիվ: Պաշտոնից բխող սեփական լիազորություններն օգտագործել բացառապես ի նպաստ Հայաստանի Հանրապետության: Մեզանից յուրաքանչյուրից է կախված մեր երեխաների վաղվա ապագան: Մենք ենք այն հասցեատերը, որն իր փրկության, իր զարգացման և բարգավաճման ճանապարհին փնտրում է մեր հայրենիքը:

Դեռ մեծ անելիքներ ունենք միասին, մեծ ծրագրեր, որոնք պետք է կյանքի կոչվեն առաջիկա տարիների ընթացքում և առաջին հերթին 2023թվականին>> :

Օգտվելով առիթից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը շնորհավորեց գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթելով խաղաղություն,քաջառողջություն և նորանոր հաջողություններ :

Այնուհետև մարզպետն ըստ ոլորտների անդրադարձավ ինչպես մարզպետարանի, այնպես էլ որոշակի առումով համատեղ աշխատանքի առաջնային ուղղություններին:

Ֆինանսական բնագավառ.

Պետական ֆինանսների կառավարման համակարգի ռազմավարական նպատակները հաշվետու ժամանակաշրջանում ուղղված են եղել հանրային կառավարման համակարգի լավագույն արդյունքի և հասարակությանը որակյալ

հանրային ծառայությունների մատուցմանը, հանրային կյանքի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար արդյունավետ միջավայրի ստեղծմանը: Պետական կառավարման համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կապված է եղել հանրային միջոցների արդյունավետ ծախսման հետ: Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանում ապահովվել է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը:

Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը 15.12.2022թ. դրությամբ հասցվել է 92.1%-ի :

2022թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի համայնքներին պետական բյուջեից տրամադրվել է 5,617,097.8 հազ. դրամ դոտացիա, իսկ 2023թ. համար նախատեսված է 6.849,910.3: Հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների բյուջեների նախագծերի նախապատրաստման և բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման հարցում:

Գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պահպանության և հողօգտագործման բնագավառներ.

Գյուղատնտեսության բնագավառում կազմակերպվել և համակարգվել են 2022թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: Մարզում իրականացվել են խոշոր, մանր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների հաշվառման աշխատանքները: Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի շրջանակներում իրականացվել են պլանով նախատեսված հակահամաճարակային կանխարգելիչ բոլոր միջոցառումները: Իրավիճակը մարզում բնութագրվում է կայուն:

Ոռոգման սեզոնին ընդառաջ և դրա ընթացքում ակտիվ համագործակցություն է ապահովվել «Ոռոգում – Ջրառ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի և 3 ՋՕԸ-ների հետ, համակարգվել են ոռոգման գործընթացը, օպերատիվ կերպով արձագանքվել ոռոգման խնդիրներին և հետևողական քայլեր են ձեռնարկվել դրանք լուծելու ուղղությամբ:

Ուսումնասիրվել և գույքագրվել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Արդյունքում մաքրվել է Մեծամորի հեղեղատարի հունը շուրջ 1000 մ երկարությամբ և 150 մ երկարությամբ իրականացվել է ափապատնեշի բարձրացում:

Համայնքներում իրականացվել են գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության պատշաճ ներկայացման, հնարավոր շահառուների ցուցակագրման և նրանց խմբերի ընդլայնմանն ուղղված աշխատանքներ, համակարգվել են 2022թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզի համայնքներում կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման աշխատանքները՝ մարզում ցանքատարածությունները կազմել է 24077,6հա:

Մարզպետարանի ոլորտային պատասխանատուների համակարգմամբ, համագործակցելով համայնքների հետ, կազմակերպվել և արդյունավետ իրականացվել են հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագրով նախատեսված

աշխատանքները, մարզ է ներկրվել 5230,65 տոննա ազոտական պարարտանյութ, որից կարբամիդ 922,65 տոննա, որը բաշխվել է թվով 9257 հողօգտագործողների:

Իրականացվել են մարզում տեղակայված 239 հակակարկտային կայանների ապակոնսերվացման, լիցքավորման և առկա թերությունների վերացման աշխատանքներ:

Համակարգվել են պտղի, բանջարեղենի և խաղողի մթերման աշխատանքները: Ըստ համայնքների, բնակավայրերի և ըստ հողօգտագործողների ցուցակները ներկայացվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ որոնք չունեն կնքված պայմանագրեր: Գործադրված ջանքերի շնորհիվ և անմիջական վերահսկողությամբ հնարավոր դարձավ մթերել խաղողի արտադրված ողջ բերքը:

Մարզի համայնքներում ընդերքօգտագործման և շահագործման կանոնների պահպանման և փաստաթղթերի օրինականության պահպանման ուղղությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից կատարվել են մշտական այցելություններ և ուսումնասիրություններ, հայտնաբերվել են խախտումներ, որոնք ուղարկվել են պատկան մարմիններին:

«Հայաստան Ծառատունկ» ծրագրի շրջանակներում մարզում տնկվել են 5099 գեղատեսիլ ծառեր և թփեր: Հաշվետու ժամանակահատվածում մարզում հիմնվել են 1631,52 հա բազմամյա տնկարկներ, որից խաղող՝ 164,28 հա, պտուղ՝ 1467,24 հա, որից ինտենսիվ՝ 855,4 հա:

Կատարված մոնիտորինգի արդյունքում 4 համայնքների մկներով վարակված 1710 հեկտարի վրա իրականացվել են պայքարի աշխատանքներ: Գրեթե ավարտվել է Եվրոպական զարգացման բանկի ֆինանսավորմամբ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնման ծրագիրը, որի արդյունքում վերականգնվել է 39 բնակավայրերի 92066 մ երկարության ոռոգման ներտնտեսային ցանցերը: Պետություն – համայնք համագործակցության սուբվենցիոն ծրագրով մեկնարկել է Մեծամոր համայնքի 12 բնակավայրերում ոռոգման 15 խորքային հորերի վերակառուցումը:

Հողաշինություն և հողօգտագործում.

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով կազմվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտե են ներկայացվել Արագած, Մայիսյան, Նալբանդյան, Արաքս, Մրգաշատ, Փշատավան, Քարակերտ, Ապագա, Մարգարա, Հայկաշեն, Ակնալիճ, Հուշակերտ բնակավայրերում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ: Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր, Խոյ և Արաքս համայնքների բնակավայրերի համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը

ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ: Մարզում «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոն հիմնելու նպատակով «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին հողատարածք հատկացնելու համար օրենքով սահմանված կարգով Արմավիրի համայնքապետարանի հետ կազմվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել հողամասերի վկայականները, հատակագծերը և ՀՀ կառավարության «Հողամասի նվիրաբերությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծը: Քննարկման արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել 2022 թվականի համար տիեզերալուսանկարների պահանջարկի վերաբերյալ հայտերը: Ընթացքի մեջ են ՓՀԷԿ-երի սեփականությունը հանդիսացող հողամասերի կադաստրային քարտեզներում հողամասերի սահմանների և տեղադիրքերի սխալների, ինչպես նաև նպատակային ու գործառնական նշանակությունների անհամապատասխանությունների շտկման ուղղությամբ տարվող աշխատանքները: ՀՀ կադաստրի կոմիտեի e-cadastre.am էլեկտրոնային հարթակում առկա հասցեների և փաստացի հասցեավորման վերաբերյալ համայնքապետարաններում առկա տվյալների համեմատման ուղղությամբ տարված աշխատանքների արդյունքում բացի Վաղարշապատ և Փարաքար համայնքներից մյուս համայնքներում իրականացվել են ճշգրտման աշխատանքներ: Օրենքով սահմանված կարգով կազմվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել մարզի 2022թվականի հողային հաշվեկշիռը, ինչպես նաև մարզի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն: Աշխատանքներ են տարվել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրինության տակ գտնվող հողատարածքներում ապօրինի հողօգտագործման երևույթները կանխելու ուղղությամբ:

Քաղաքաշինության բնագավառ.

Քաղաքաշինությունը և, մասնավորապես շինարարության ոլորտը, մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացում արձանագրող բնագավառն է: Քաղաքաշինության ոլորտում 2022թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ գործառույթները՝

-տեղական ինքնակառավարման մարմիններում, համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարությունների հայտնաբերման, կանխման, կասեցման, օրենքով սահմանված կարգով միջոցառումների իրականացման աշխատանքները:

-սուբվենցիաների և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և ուսումնասիրման գործընթացի ուսումնասիրություն,

-ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատման քաղաքաշինական փաթեթները համաձայնեցվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Արմավիրի մարզպետի հետ:

-իրականացվել են մշտադիտարկման գործառույթներ 2020-2021թթ.. սուբվենցիոն ծրագրերով ավարտված շուրջ 53 օբյեկտներում և 2022թ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող 29 շինարարական օբյեկտներում,

-իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզի մի շարք ավազի հանքերում մասնագիտական ուսումնասիրություններ,

-իրականացվել են մարզպետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների շենքերի և տարածքների /հողամասերի/ տեխնիկական վիճակի մասնագիտական ուսումնասիրություններ,

-կատարվել են Նոր Արմավիր բնակավայրում, 2021թ. դեկտեմբերի 7-ին հրդեհի, ինչպես նաև 2022թ. ուժեղ քամու և պտտահողմի հետևանքով մի շարք բնակավայրերում շենք-շինություններին պատճառված վնասների վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքներ, որոնք ներկայացվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչություն:

- համակարգվել են ՀՀ Արմավիրի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ընթացքը:

Ճանապարհաշինության բնագավառ.

ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 610,8կմ, որից միջպետական նշանակության՝ 123,2կմ, հանրապետական նշանակության՝ 95,8կմ և մարզային /տեղական/ նշանակության՝ 391,8կմ: 2022թվականի հաշվետու ժամանակահատվածում մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 53,5մլն ՀՀ դրամ: 2022թվականի սուբվենցիոն ծրագրով բնագավառում իրականացվում են ճանապարհների վերանորոգման, հիմնանորոգման, ասֆալտապատման, ինչպես նաև բնակավայրերի փողոցների տուֆով սալարկման շինարարական աշխատանքներ, որոնց որակի վերահսկողության նկատմամբ իրականացվում է մշտական հսկողություն:

2023թ ընթացքում նախատեսվում է նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներով հիմնանորոգել մարզի տարածքում գտնվող միջպետական և հանրապետական նշանակության կարևոր ճանապարհներ:

Տրանսպորտ.

Մարզի համայնքների մեծ թվով բնակավայրեր կապված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոնների ուղղություններով գործում է 11 ավտոբուսային (թվով 21 ավտոբուս) և 11 միկրոավտոբուսային (թվով 25 միկրոավտոբուս) ներմարզային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում են 16 ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիներ: Արմավիրի մարզկենտրոնից դեպի այլ մարզեր գործում է 3 ավտոբուսային և 2 միկրոավտոբուսային երթ: Սակայն շարունակվում է չլուծված մնալ մի շարք համայնքների և մարզկենտրոնի միջև տրանսպորտային կապի խնդիրը, որի ուղղությամբ արդեն իսկ առարկայան քայլեր են ձեռնարկվել և այն մեր օրակարգային հարցերից է:

Կրթություն, մշակույթ, երիտասարդություն և սպորտ.

Հաշվետու ժամանակահատվածում գերակա խնդիր է եղել կրթության զարգացումը: Մարզային մակարդակում կրթության համար առանցքային են եղել ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և կրթության ծրագրերի, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումը և վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգում:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 111 հանրակրթական ուսումնական հաստատություն, որից հիմնական դպրոց՝ 20, միջնակարգ դպրոց՝ 91: 2021-2022 ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կազմել է՝ 35306, դպրոցահեն 53 նախակրթարանների սաների թիվը՝ 1377, համընդհանուր ներառական կրթության կարիք ունեցող երեխաների թիվը՝ 573: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը՝ 61, սաների թիվը՝ 4800:

2022 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից 17-ում մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբն իրականացրել է մշտադիտարկման աշխատանքներ: Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են դպրոցների բնականոն գործունեության, ուսումնական և դաստիարակչական աշխատանքերի կազմակերպումը:

Մշտադիտարկման ընթացքում դպրոցների տարբեր դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ մարզում նշված առարկաների ուսուցման որակի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կազմելու նպատակով:

Դպրոցների տնօրեններին հանձնարարվել է սեղմ ժամկետներում վերացնել արձանագրված խախտումները և թերությունները՝ ապահովելով կրթության որակը:
2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում (2022թ. փետրվար-մայիս ամիսներ) ուսումնասիրված 12 դպրոցների համապատասխան դասարաններում 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում (2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ) տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից:

ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում մշտադիտարկման և կազմակերպության գործունեության վերահսկողության աշխատանքները կշարունակվեն նաև 2023 թվականի ընթացքում:

2022 թվականին Արմավիրի մարզից ՀՀ բուհերի ընդունելության քննություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 948 դիմորդ, որոնցից ընդունվել է 682-ը (71. 9%):

Աջակցություն է ցուցաբերվել հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մրցույթների կազմակերպմանը: 2022 թվականին մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է 31 մրցույթ:

Վերահսկողություն է իրականացվել հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվող ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթների անցկացման նկատմամբ:

Մարզում կազմակերպվել և անցկացվել է դպրոցականների՝ 2021-2022 ուստարվա օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը: Հումանիտար և բնագիտական առարկաներից տարածքային փուլին մասնակցած 1096 աշակերտից մարզային փուլին երաշխավորվել և մասնակցել է 209 աշակերտ: Մարզային փուլի՝ 209 մասնակցից հանրապետական փուլին երաշխավորվել է մասնակցել 62 աշակերտ:

2022 թվականի ընթացքում անցկացված հանրապետական փուլի արդյունքներով Արմավիրի մարզի աշակերտներն ունեն՝ 4 հատ 1-ին կարգի, 4 հատ 2-րդ կարգի և 4 հատ 3-րդ կարգի դիպլոմ, ևս 13 հատ գովասանագիր:

ՀՀ Արմավիրի մարզի 12-րդ դասարանի աշակերտները մասնակցել են Երևանի Պետական Համալսարանի կողմից կազմակերպված օլիմպիադային: Նրանցից 37-ը 2022 թվականին հաղթող են ճանաչվել օլիմպիադայի եզրափակիչ փուլում: Նրանցից 2-ը արժանացել են 1-ին կարգի դիպլոմի, 2-ը՝ 2-րդ կարգի դիպլոմի, 6-ը՝ 3-րդ կարգի դիպլոմի, ևս 27-ը՝ գովասանագրի:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 ուսումնական հաստատությունների՝ 2022 թվականին պարտադիր ատեստավորման ենթակա 851 ուսուցիչներ վերապատրաստվել են (2021 թվականին վերապատրաստվել և ատեստավորվել է 561-ը), 2022 թվականի դեկտեմբեր ամսին ընթանում է պարտադիր ատեստավորման գործընթացը:

2022 թվականին մարզի 64 ուսուցիչներ մասնակցել են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը և ընդգրկվել հավելավճարների տրամադման ծրագրում (28-ը՝ 2021 թվականին).

Նոր նախակրթարանների ստեղծման համար ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել հայտ Արմավիր, Մյասնիկյան, Բերքաշատ, Զարթոնք, Տարոնիկ, Ակնաշեն, Դալարիկ, Երվանդաշատ և Մուսալեռ բնակավայրերում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում նախակրթարաններ ստեղծելու նպատակով:

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 5-ի N 823-Ն որոշման համաձայն «Մոդուլային տիպի մանկապարտեզների շենքային ապահովում» միջոցառման շրջանակներում 2022թ. ընթացքում Այգեվան, Լենուղի, Գետաշեն, Նորավան և Փշատավան համայնքներում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման համար կատարվել են նախագծանախահաշվային աշխատանքներ: Արևիկ համայնքում կառուցվում է մոդուլային տիպի մանկապարտեզ: Ֆերիկ համայնքում 2022 թվականի սեպտեմբերից գործում է դպրոցահեն նախակրթարան:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում ընթանում է Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները:

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Փարաքարի միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքները, նախատեսվում է շահագործման հանձնել 2024 թվականին:

Մրգաշատի և Ջրարբիի միջնակարգ դպրոցներում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է դպրոցական նոր շենքերի կառուցում:

ՀՀ պետական բյուջեի «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում Արգինա համայնքում ավարտվում են փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքի կառուցման աշխատանքները:

«Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ընդգրկվել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների «մոդուլային» տիպի թվով 10 շենքերի կառուցման ծրագրում:

Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորման ծրագրում են ընդգրկվել մարզի 12 հանրակրթական դպրոցներ, ծրագրի շրջանակներում իրականացվելու են հիմնանորոգման և վերանորոգման, ինչպես նաև՝ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ:

2022 թվականի սեպտեմբերից ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 66 դպրոցներ տարրական դասարանների աշակերտներին և նախակրթարանի սաներին տրամադրում են տաք սնունդ, իսկ 45-ը՝ չոր սնունդ: Ընդհանուր առմամբ ներկայումս ծրագրում ընդգրկված է 14373 աշակերտ:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են հանրապետական և մարզային բնույթի շուրջ 15 միջոցառումներ՝ սպորտլանդիաներ, <<Վարչապետի գավաթ>> կրոսավազք, ֆուտբոլի առաջնություն և այլն:

Առողջապահության բնագավառ.

Մարզի առողջապահական համակարգում գործում են 56 բուժհաստատություններ, որից 52-ը՝ համայնքային, 4-ը՝ մարզպետարանի ենթակայության: Առողջապահության համակարգում աշխատում են 431 բժիշկներ, միջին բուժանձնակազմի թիվը 790 է: Մեկ բժիշկը սպասարկում է 707 բնակչի: Մարզի բուժհաստատությունների մահճակալների թիվը 389 է:

Մարզպետարանի ենթակայության 4 բժշկական հաստատությունների գլոբալ բյուջեն 2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է՝ 2,505,740.6 հազ. ՀՀ դրամ: 2021 թվականի տարեկան վճարովի ծառայությունները կազմել են 608,812.4 հազ. ՀՀ դրամ, մինչդեռ 2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունները կազմել են 658,588.1 հազ. ՀՀ դրամ:

2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզում գրանցվել է՝ 1826 ծնունդ, որից 1149-ը մարզի ծննդատներում, 677-ը՝ Երևան և այլ մարզեր:

2022թ. դեկտեմբերի 1-ի դրութամբ կենտրոնացված գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և բուժհաստատություններին է բաշխվել 151.296.241հազ. ՀՀ դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից 109.761.223 հազ.ՀՀ դրամ արժողությամբ հակադիաբետիկ դեղամիջոցներ: Մարզում 2022թ..դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի ԱԱՊ օղակում հաշվառված են եղել 10198 դիաբետով հիվանդներ: 2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներում աշխատավարձի պարտքեր չեն ձևավորվել:

Մասնավոր ընկերության հետ Արմավիրի ԲԿ-ում տեղադրվել է համակարգչային շերտագրման սարք: Արմավիր ԲԿ-ի բակային հատվածում իրականացվել են բարելավման աշխատանքներ, կատարվել է ասֆալտապատում, ինչպես նաև վերանորոգվել է հիվանդանոցի ընդունարանը, ԲԿ-ում հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար կառուցվել է խաղահրապարակ, մեկնարկել են ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վերակառուցման աշխատանքները: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ջանքերով և ՀՀ ԱՆ ֆինանսավորմամբ ամբողջությամբ վերանորոգվում և վերազինվում է Էջմիածնի ԲԿ ՓԲԸ-ը, ինչպես նաև մարզի բուժհաստատություններին է տրամադրվել երկու շտապ օգնության մեքենա, որը առաջիկայում կհամալրվի ևս չորսով:

Լույս հայի աչքերին հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում Արմավիր ԲԿ-ում բացվել է ակնաբուժական աշխատասենյակ, որը հագեցած է վերջին սերդի սարքավորումներով: Մարզպետարանի ջանքերով պարբերաբար իրականացվում են սկրինինգային ծրագրեր, որի շրջանակներում մարզի բուժհաստատություններ են եկել մի շարք բժիշկներ, արդյունքում պացիենտներին տրամադրվել է անվճար խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվել են մի շարք հետազոտություններ: Առաջիկա տարվա ընթացքում կվերանորոգվի Արմավիր ԲԿ-ի պոլիկլինիկայի մասնաշենքը: Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, որն ունենալու է իր դրական ազդեցությունը մարզի բժշկական կազմակերպութնունների որակյալ ծառայությունների մատուցման համար:

Սոցիալական պաշտպանության բնագավառում միասնական սոցիալական ծառայության 3 տարածքային կենտրոններում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքների արդյունքում 2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6795 է, որոնցից նպաստառու են 5225-ը, հրատապ դրամական օգնություն է ստացել 1142 ընտանիք: 2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 7021 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 4726-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի են տեղավորվել 648 մարդ: Արմավիրի մարզային սոցիալական ապահովության կենտրոններում հաշվառված են 33863 կենսաթոշակառուներ:

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2022թ. հաշվետու ժամանակահատվածում դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 631 ընտանիքների՝ 23 330.0 հազ. դրամ գումարի չափով:

ՀՀ կառավարության որոշումների համաձայն մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամ դարձած՝ 105 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք: 2022թ. ընթացքում մարզպետարանում հաշվառվել է Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված 17 զինծառայողի ընտանիք, որոնք համայնքների ղեկավարների որոշմամբ ճանաչվել են բնակարանի կարիքավոր:

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի որոշմամբ բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան կամ բնակելի տուն է ձեռք բերել զոհված (մահացած) զինծառայողի 7 ընտանիք:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության համապատասխան որոշումը զինծառայողի կյանքին պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալու և զոհված (մահացած) զինծառայողի գերեզմանի բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի հատուցում ստանալու համար առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից ՀՀ պաշտպանության նախարարություն են ներկայացվել 16 զոհված զինծառայողների ընտանիքների փաստաթղթեր, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով անհայտ

բացակայող ճանաչված 8 անհետ կորած զինծառայողի գործեր: ՀՀ պաշտպանության նախարարություն են ներկայացվել 2 զինհաշմանդամների դիմումները /անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին/՝ պետության կողմից նրանց հատուցում տրամադրելու նպատակով:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կարգավորվում է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովության ծրագրի իրականացումը ՀՀ մարզերում: Միգրացիոն ծառայության և մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության աշխատակիցների կողմից 2022թ. գարնանից սկսվել է մարզերում բնակվող հավակնորդ շահառուների վերահաշվառման գործընթացը, որի արդյունքում մարզում վերոնշյալ ծրագրի շահառու է ճանաչվել 12 ընտանիք, որոնց կառաջարկվի ներկայացնել դիմում՝ բնակարանի գնման վկայագիր ստանալու համար, ծրագիրը շարունակական է:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն.

Իրականացվել են աշխատանքներ՝ ընտանեկան բռնության 57 դեպքերի հաշվառման և հետագա մասնագիտական շարունակական աշխատանքի և միջգերատեսչական համագործակցության ապահովման ուղղությամբ: Կազմակերպվել է 166 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը և ապահովվել է ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում երեխաների ընդգրկումը:

Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ուղղությամբ համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձաժողովների, ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ կազմակերպվել են տուն-այցեր, մարզում բնակվող սոցիալապես անապահով այն ընտանիքներ, որտեղ առկա էր անչափահասների հետ կապված լուրջ խնդիրներ: Խնդիրների լուծման նպատակով տարվել են մասնագիտական աշխատանքներ, ցուցաբերվել նյութական աջակցություն, ծնողների հետ տարվել են բացատրական աշխատանքներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ անցկացվել է հանդիպում- քննարկումներ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնահարցերի առնչությամբ: Համատեղ աշխատանքների արդյունքում ձեռնարկվել է հնարավոր բոլոր միջոցները պարտադիր ուսուցումից դուրս մնացած 43 աշակերտներին ուսումնական պրոցեսում ընդգրկելու համար:

Հավաքագրվել է ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացված հաշվառման մեջ գտնվող և փաստացի հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով: Իրականացված աշխատանքների արդյունքում 14 անչափահասներ հանվել են հաշվառումից, 9 անչափահասների վարքագծի նկատմամբ իրականացվել է հսկողություն:

Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 4 երեխաների անձնական գործերը ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ կենտրոնացված հաշվառման: Մարզի բնակիչ հանդիսացող 8 քաղաքացիներ հաշվառվել են, որպես որդեգրել ցանկացող անձինք ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ կենտրոնացված հաշվառման:

Խնամատար ընտանիքում տեղավորված 3 երեխաների ընտանիքների նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում և նրանց հետ կնքված պայմանագրային ժամկետները երկարացվել են: Փաստացի առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխաներ տեղավորվել են «Մեր տուն» հասարակական կազմակերպություն և 1 երեխա «Զատիկ երեխաների աջակցության» կենտրոնից տեղավորվել է և վերամիավորվել ընտանիքի հետ: Մասնակցություն է ցուցաբերվել 28 դատական նիստերի, որտեղ անհրաժեշտություն է առաջացել որպես երրորդ անձ հանդես գալու և երեխայի կարծիքը լսելու գործընթացում: Մարզում կազմակերպվել և աջակցվել է երեխաներին նվիրված և նրանց հիմնախնդիրների քննարկմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Համագործակցելով Միասնական սոցիալական ծառայության կենտրոնների, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 4 երեխաներ ժամանակավորապես հանձնվել են այլընտրանքային խնամքի:

Կազմակերպվել է մարզի սոցիալապես անապահով և առավել խոցելի 200 երեխաների հանգստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում և թվով 20 ծնողազուրկ, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված ընտանիքների երեխաների հանգիստը՝ Հանքավանի «Արագած» ճամբարում, և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով մարզում վերաբնակեցված արցախցի ընտանիքների 12 անչափահաս երեխաների հանգիստը Սլովենիայի Հանրապետությունում: Աջակցություն է ցուցաբերվել մարզում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ իրականացնել մարզային ծրագրեր:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, համայնքային ծառայության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր.

2022թվականին մշտական կապի մեջ լինելով մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկվել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը: Շարունակաբար հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները, համայնքի ղեկավարի կարգադրությունները սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողքներին, առաջարկություններին, քաղաքացիների ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերին օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու գործընթացներին:

2022 թվականի ընթացքում մարզի՝ Ֆերիկ, Արմավիր և Բաղրամյան համայնքներում իրականացրել են իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներ: Մեթոդական աջակցություն են ցուցաբերվել մարզի 7 խոշորացված համայնքների աշխատակազմերի ձևավորմանը:

Համայնքապետարաններում կադրային գործի վարման, համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստման և կազմակերպման, վերաբերյալ համայնքապետարանների

աշխատակազմերի քարտուղարների ժամանակավոր պաշտոնակատարներին տրվել են խորհրդատվություններ: Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը պետական լիազորված մարմին է ուղարկվել մարզում տվյալ ամսվա ընթացքում նշանակված մրցույթների և ատեստավորումների արդյունքները, ինչպես նաև հաջորդ ամսվա ժամանակացույցերը: Համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 521 մրցույթներ, կայացել է 453 մրցույթ, որոնց մասնակցել է 531 քաղաքացի: Հաղթող է ճանաչվել 452 քաղաքացի, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոններում:

2022 թվականին «Աութսորս» ՍՊԸ-ի հետ համատեղ մարզպետարանում անցկացվել են 80 համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման դասընթացներ, ՀՀ կառավարման ակադեմիայի հետ 46 ավագանու անդամների և 6 համայնքների ղեկավարների վերապատրաստումներ: Ապահովվել է համագործակցությունը համայնքների ղեկավարների, տարածքային ընտրական հանձնաժողովների, ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Արմավիրի, Վաղարշապատի, Մեծամորի և Բաղրամյանի բաժանմունքների, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ: Կազմվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» է ուղարկվել 2022 թվականի ունկնդիրների պլան-գրաֆիկը և մշտական հսկողություն է իրականացվել նրանց կողմից դասընթացների մասնակցությունը ապահովող գործընթացի վրա:

Ապահովվել է համագործակցությունը ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ տարածքային ստորաբաժանման հետ:

Մասնակցություն է ցուցաբերվել 2021 թվականի ձմեռային և 2022 ամառային զորակոչերի կազմակերպման և անցկացման գործընթացին: Մշտապես ուշադրության կենտրոնում է պահվել մարզի երեք կազմակերպություններում այլընտրանքային ծառայություն կատարող անձանց աշխատանքային և կենցաղային պայմանների ապահովման և իրենց օրենքով սահմանված կարգով պարտականությունների կատարման ուղղությամբ: Այլընտրանքային ծառայության վերաբերյալ հավաքվել է տեղեկատվություն մարզի չորս համայնքներից և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան հանձնաժողովին:

Ապահովվել է մարզի վարչական տարածքում տեղակայված զորամասերի, մարզի գործադիր մարմինների ստորաբաժանումների և համայնքների միջև կապը և փոխգործակցությունը:

Զորահավաքային նախապատրաստություն.

Կազմակերպվել և համակարգվել են մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքները: Մարզի համայնքների, վարչական ղեկավարների, դպրոցների տնօրենների և զինղեկների մասնակցությամբ կազմակերպվել է հավաք խորհրդակցություն «ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում դիմորդների գրավչության բարձրացման» թեմայով: Համագործակցելով ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իրականացվել են զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային ռեսուրսների ուսումնասիրման, ճշգրտման աշխատանքներ: Շարքային կազմի պարտադիր

զինվորական ծառայության զորակոչերի ընթացքում նախապատրաստվել են մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերը և մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

Հաստատվել և հստակեցվել են համայնքներում ծավալվող ազդարարման տեղամասերի հասցեները, տեղամասերի պետերի անվանացուցակները և զորահավաքին վերաբերող այլ մանրամասներ: Նախապատրաստվել են մարզպետարանի աշխատանքային ռեժիմների փոխադրման պլանը և պլանի քաղվածքները, կազմակերպվել են վարժական հավաքներում ընդգրկված մարզի զինապարտ քաղաքացիների ծանուցման աշխատանքները, տարվել է մարզպետարանի զինապարտ աշխատակիցների հաշվառում և ամրագրում: Սահմանված կարգով վարվել են առկա գրանցամատյանները: 2022թ. սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված խմբավորումների կողմից ՀՀ սահմանների վրա իրականացված ռազմական ագրեսիայի հետևանքով հավաքագրվել է մարզում գրանցված վիրավոր և անհետ կորած զինծառայողների մասին տեղեկատվության հավաքագրում, իսկ համայնքապետարանների միջոցով կազմակերպվել է զոհված զինծառայողների մարմինների տեղափոխման և հուղարկավորության միջոցառումները:

Զարգացման ծրագրեր, մոնիտորինգ և վերլուծություն.

Կազմվել է ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման մարզի 2022 թվականի գործունեության ծրագրի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով: Կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարություն են ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման 2021թ. գործունեության ծրագրի տարեկան և 2022թ. գործունեության ծրագրի կիսամյակային մոնիտորինգի հաշվետվությունները՝ հաշվի առնելով նախարարություններից, գերատեսչություններից և համայնքներից ստացված տեղեկատվությունը:

Սուբվենցիոն ծրագրեր.

2022թ. ընթացքում աջակցություն է ցուցաբերվել համայնքներին սուբվենցիաներ ստանալու նպատակով հայտերի մշակման, սահմանված կարգով ՀՀ ՏԿԵՆ ներկայացման և ծրագրերի իրականացման ողջ ընթացքում: Մարզի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ծրագրերի իրականացման ընթացքը լուսաբանող լուսանկարները պարբերաբար հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում: Մարզպետի և մշտադիտարկման աշխատանքային խմբի անդամների կողմից պարբերաբար այցելություններ են կատարվում համայնքներ՝ շինարարական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: 2022թ. ընթացքում հավանության են արժանացել 41 միավորված սուբվենցիոն ծրագրեր 147 ենթածրագրերով (ներկայացված 8 համայնքների կողմից): 2022թ. սուբվենցիոն ենթածրագրերը սկսվել և ընթացքի մեջ են, որոշ ենթածրագրեր ավարտվել են և մարզպետարանը ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում իրականացվող աշխատանքների որակյալ և պայմանագրով սահմանված ժամկետում ավարտելու ողջ ընթացքը:

Արտաքին կապեր.

2022թ. ընթացքում մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման

և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով արտաքին կապերի բնագավառում շարունակվել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով և նոր կապեր ու համագործակցություններ սկսելու համար գործուն քայլեր են ձեռնարկվել: Տարվա ընթացքում աշխատանքներ են տարվել համագործակցության նոր կապեր ստեղծելու և նոր հուշագրեր ստորագրելու ուղղությամբ: Կայացել են հանդիպումներ մարզպետի և Հայաստանում Նիդերլանդների թագավորության արտակարգ և լիազոր դեսպանի, Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի, ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպանի հետ: Դեսպանների հետ հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են նաև վարչական միավորների միջև առկա հարաբերությունները զարգացնելուն և նոր կապեր հաստատելուն վերաբերող հարցեր:

Մարզպետի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է 2022թ. հունիսի 29-30-ը . Լիոն քաղաքում կայացած հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովին, որտեղ ելույթ է ունեցել մարզպետը:

ԳԴՀ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի և Արմավիրի մարզի միջև ապակենտրոնացված համագործակցության ամրապնդման շրջանակներում, ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում, գերմանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա նոյեմբերի 14-18 մարզի պատվիրակությունը այցելել է Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Բուրգենլանդ շրջան, ինչպես նաև Նաումբուրգ քաղաք՝ մարզերի և Արմավիր-Նաումբուրգ քաղաքների միջև համագործակցության հուշագրեր ստորագրելու նպատակով: 2022թ. դեկտեմբերի 14-17-ը Բաշկորտոստանի Հանրապետության մայրաքաղաք Ուֆայում անցկացված «Միջազգային բիզնես շաբաթ» ֆորումին մասնակցել է նաև մարզի պատվիրակությունը:

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր.

2022թ. հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ աշխատանքներ են կատարվել նաև մարզպետարանում գործավարության վարման, փաստաթղթերի ընդունման, օպերատիվ հաշվառման և տնօրինման միասնական համակարգի պահպանման, մարզպետարանի կարիքների համար 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման, մարզպետարանին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետարանի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, ինչպես նաև մարզպետարանի տրանսպորտային սպասարկման ապահովման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է ընդհանուր քանակով 20613 և առաքվել 7850 փաստաթուղթ, տարաբնույթ հարցերի կապակցությամբ ընդունվել է մարզպետի 705 որոշումներ:

Իրավական հարցեր.

2022թ. ընթացքում մարզպետի կողմից ընդունված է 705 որոշումները ներկայացվել են տարածքային կառավարման ոլորտը համակարգող փոխվարչապետին և դրանց նկատմամբ իրավական հսկողության արդյունքում գնահատվել են իրավաչափ:

Օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման իրազեկման ուղղությամբ պարբերաբար համայնքներ, մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև բժշկական հաստատություններ են ներկայացվել մեթոդական շրջաբերական գրություններ: Մարզպետարան ներկայացված տարբեր ոլորտներին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մշակվել և ներկայացվել են հիմնավորված առաջարկություններ, որոնք իրատեսական են գնահատվել և իրենց ուրույն տեղն են գտել շրջանառվող նախագծերում:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապեր.

Ոլորտը համակարգող օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի, մարզպետարանի գործունեությանվերաբերյալ հասարակության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, ծրագրեր, հայտարարություններ, պարտադիր հրապարակման ենթակա այլ տեղեկատվական բնույթի նյութեր մարզպետարանի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի, ինչպես նաև ՋԼՄ հարթակներով տարածելու միջոցով: Առանձին դեպքերում ապահովվել է նաև համայնքապետարաններին և մարզպետարանի ենթակայությամբ գործող կրթական ու առողջապահական հաստատություններին վերաբերող տեղեկությունների լուսաբանումը:

Վերջապես առաջնային նպատակներից է բարձրացնել բնակչությանը մատուցվող պետական, տարածքային և համայնքային ծառայությունների որակն ու արդյունավետությունը, արմատախիլ անել կոռուպցիան նրանց փոխհարաբերություններում:

Օրենսդրությամբ կարգավորվում են պաշտոնական գրությունների, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների ընդունման, ընթացք տալու և դրանց կապակցությամբ ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցերը: Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պարբերաբար ստուգելու իրենց ենթակա կազմակերպություններում պաշտոնական թղթակցության և փաստաթղթաշրջանառության վիճակը, միջոցներ ձեռնարկելու այդ գործում տեղ գտած թերությունները վերացնելու համար: Սահմանված է, որ տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը, նրանց բաժինները պարտավոր են պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել քաղաքացիների դիմումներին ու բողոքներին ընթացք տալու մասին, պարբերաբար հաշվետվություն ներկայացնել համայնքի ավագանու նստաշրջաններում հրավիրված նիստերում: Նշված գործընթացի կատարողական կարգապահությունը, սահմանված կարգի խախտման, քաշքշուկների, դրանց նկատմամբ բյուրոկրատական վերաբերմունքի համար մեղավոր պաշտոնատար անձինք պետք է ենթարկվեն պատասխանատվության, քանի որ այդ գործընթացի ճիշտ կարգավորումը էապես նպաստում է տեղական ինքնակառավարման հարցերի անշեղ լուծմանը, հետևաբար և կառավարման մեջ օրինականության ապահովմանը: Թվում է, թե տեղական ինքնակառավարման մեջ օրինականության ապահովման գործում հանրային իրավունքի իրականացման տարբեր բնագավառներում քաղաքացիների և կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումների և բողոքների կարևոր նշանակությունը պետք է որ պարտավորեցներ դրանց ճիշտ և ժամանակին ընթացք տալուն, սակայն գրե՛թե բոլոր համայնքապետարաններում, որպես կանոն, գործընթացի նկատմամբ պատշաճ վերաբերմունք չցուցաբերելու պատճառով ոչ միայն ժամանակին իրենց լուծումը չեն ստանում դրանք, այլև առաջ է գալիս փաստաթղթաշրջանառության

մեծածավալ հուսք միևնույն հարցի կապակցությամբ կրկնվող փաստաթղթերի կուտակում: Դա հետևանք է այն բանի, որ անբավարար են ուսումնասիրվում և ընդհանրացվում տեղական ինքնակառավարման մարմիններից, քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված փաստաթղթերում բարձրացված հարցերը, ժամանակին չեն բացահայտվում բողոքների առաջացման պատճառները, որոշ դեպքերում բավարար միջոցներ չեն ձեռնարկվում այդ գործում եղած թերությունները վերացնելու ուղղությամբ, հաճախակի խախտվում են դիմումների և պաշտոնական գրությունների քննարկման ժամկետները:

Կոռուպցիայի դեմ պայքար.

Կոռուպցիան շարունակում է մարտահրավեր լինել իրավական պետության կայացման համար: Ուստի վճռականանություն կա բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ պայքար մղելու կոռուպցիայի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելով կոռուպցիոն բոլոր դրսևորումները: Հակակոռուպցիոն գործընթացներում հաջողելու համար բավարար քաղաքական կամք և այդ կամքն իրական արդյունքի վերածելու նպատակով շարունակվելու է հակակոռուպցիոն գործընթացին ուղղված անհրաժեշտ աշխատանքների իրականացումը, որտեղ առանցքային դերակատարում ունեն մարզի իրավապահ համակարգի ներկայացուցիչները: Մարզի մասշտաբով իրավախախտումների նախազգուշացման, նախականխման խնդիրների հետ կապված հաջողված որոշումների ընդունումը պահանջում է համատեղ և փոխհամաձայնեցված ջանքեր այն բազմաչարչար և արդյունավետ աշխատանքի, որն իրականացվում է դատախազության, ոստիկանության, ազգային անվտանգության և քննչական ծառայության մարմինների կողմից: Գիտակցում ենք, որ այս խնդիրների լուծման համար օրինականության հետագա ամրապնդման և հանցագործությունների հետագա կանխման գործում դեռևս անելիքներ կան և հետևաբար, շարունակաբար հետևողական պետք է լինել օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում: Իսկապես, հիմնախնդիրները քիչ չեն և դրանց լուծման համար տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ համակարգի, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ուժերի համախմբումը, հետևողական ու նպատակասլաց աշխատանքը պետք է որակել որպես հրատապ լուծում պահանջող խնդիր:

Այսպիսով, ամփոփելով քննարկման արդյունքները, պետք է արձանագրել, որ տարածքային կառավարման բոլոր ոլորտներում արմատական բարելավումը օրվա հրամայականն է, որը պետք է գտնվի ինչպես մարզպետարանի, այնպես էլ հանրային կառավարման մյուս մարմինների ուշադրության կենտրոնում, ավարտելով ելույթը, նշեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը:

Օրակարգային երրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում 2022 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և 2023 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության մարզպետարանի ամենամյա աշխատանքային ծրագրի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 11-ի N67-Լ հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2022

թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 25-ի ՆՄՈ/507-2022 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 2022 թվականի երրորդ եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում՝ **http://armavir.mtad.am/**:

Աշխատանքային խմբի կողմից իրավական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգերով:

Իրավական հսկողության արդյունքում կազմված հարցաշարով խախտումներն ու թերություններն արձանագրվել են ֆինանսների, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման, առևտրի և ծառայությունների, քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառներում:

Արձանագրված խախտումներն ու թերությունները Բաղրամյան համայնքի տեղական ինքնակառաավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից վերացվել են և դրանց առումով ընդունվել են համապատասխան որոշումներ:
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում Բաղրամյան համայնքում հայտնաբերված և արձանագրված 2022 թվականի ընթացքում կառուցված 6 ինքնակամ շինությունների մասով, որոնք հատուկ կարգավորման գոտիներում են հայտնաբերվել (միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներ), ինչպես նաև մինչև 2022 թվականը ինքնակամ կառուցված թվով 5 հասարակական օբյեկտի մասով (երկուսը Քարակերտ գյուղի, երկուսը՝ Դալարիկ, իսկ մեկը՝ Հուշակերտ գյուղի վարչական տարածքներում) համայնքի կողմից գործընթացն ընթացքի մեջ է:

Համընդհանուր խնդրո առարկա է նաև արխիվային գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքները:

Նա տեղեկացրեց նաև, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՆԳՍ/20.1/33073-2022 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարան է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանը, համաձայն որի՝ ՀՀ Արմավիրի մարզում 1-ին եռամսյակում ընդգրկված է Մեծամոր, 2-րդ եռամսյակում՝ Փարաքար, 3-րդ եռամսյակում՝ Արաքս, իսկ 4-րդ եռամսյակում՝ Խոյ համայնքները:

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազությունից, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչությունից, Հայաստանի Հանրապետության

ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունից 2022 թվականի ընթացքում ստացված միջնորդագրերի, գրությունների և տեղեկատվության ներկայացման պահանջների քննարկման արդյունքների վերաբերյալ Լիաննա Հարությունյանը ներկայացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի և պետական կառավարման համակարգի այլ մարմինների, մասնավորապես մարզի իրավապահ համակարգի մարմինների հետ համագործակցված աշխատանքների արդյունավետությունը բարձր գնահատելով՝ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության կողմից 2022 թվականի ընթացքում մարզպետարան ներկայացված միջնորդագրերը, գրությունները և տեղեկատվության ներկայացման պահանջները վերաբերելի են եղել ինչպես մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մարզային ենթակայությամբ գործող բժշկական և ուսումնական հաստատությունների իրավասությանը:

Ներկայացված բոլոր միջնորդագրերը սահմանված կարգով և ժամկետներում քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանում, գործով պատասխանատու աշխատակիցների, ըստ անհարժեշտության և համապատասխանաբար՝ մարզի համայնքների ղեկավարների, մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների անմիջական մասնակցությամբ:

Մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, հաշվի առնելով <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի պահանջները, թե համայնքներ և թե մարզային ենթակայությամբ գործող բժշկական և ուսումնական հաստատություններ ներկայացվել են համապատասխան շրջաբերական գրություններ՝ սահմանված առաջարկություններով և հանձնարարականներով՝ խստագույնս պահպանելու և կիրառելու ՀՀ գործող օրենսդրության պահանջները՝ բացառելով միջնորդագրերով ներկայացված հանցանքների կատարումը, դրանց նպաստող հանգամանքների կրկնվելու հավանականությունը և ապահովելու այդ ուղղությամբ գործուն աշխատանքներ իրականացնելու մշտական գործընթացը:

Նա նշեց նաև, որ մարզի իրավապահ համակարգի մարմինների հետ համագործակցության արդյունքում 2022 թվականի ընթացքում մարզպետարանի կողմից նրանց քննարկմանը ևս ներկայացվել են իրենց իրավասության շրջանակում մարզին առնչվող հարցեր, որոնց լուծումները դրական ազդեցություն են ունեցել մարզում օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում:

Օրակարգային հինգերորդ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2022 թվականի արդյուքները առ 12.12.2022թ դրությամբ:30.12.2022թ.դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների պլանավորումը կազմել է 11527132.3 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 10724800,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 802331.9 հազ. դրամով, 16.12.2022թ դրությամբ փաստացի մուտքերը կազմել է 10240073.3 հազ. 30.12.2021թ.դրությամբ մուտքագրված 10298883,4 հազ. դրամի համեմատ, կամ պակաս է մուտքագրվել

58810.1,0հազ. դրամով: Պակաս մուտքերը պայմանավորված են համայնքներին տրվող կապիտալ սուբվենցիաների ֆինանսավորմամբ և սեփական եկամուտների հավաքագրմամբ:

30.12.2022թ դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների պլանավորումը կազմել է 4241443,8 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 3600716,1 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 640727.7 հազ. դրամով, 16.12.2022թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 3907675.3 հազ. դրամ, 30.12.2021թ.դրությամբ հավաքագրված 3699278,7 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 208396.6 հազ. դրամով, կատարվել է 92.1%-ով, նախորդ տարվա 102,7%-ի համեմատ:

30.12.2022թ.դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի պլանավորումը կազմել է 1065906.4 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 1113632,3 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 47725,9 հազ. դրամով, 16.12.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 963724,9 հազ. դրամ , 30.12.2021թվականին հավաքագրված 866893,6 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 96831,3 հազ. դրամով, կատարվել է 90,4%-ով, նախորդ տարվա 77,8%-ի համեմատ:

30.12.2022թ դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի պլանավորումը կազմել է 1687885,7 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 1217420,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 470465,3 հազ. դրամով, 16.12.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 1440218,1 հազ. դրամ , 30.12.2021թ. դրությամբ հավաքագրված 1538334,5 հազ. դրամի համեմատ, կամ պակաս է հավաքագրվել 98116,4հազ. դրամով, կատարվել է 85,3%-ով, նախորդ տարվա 126.4%-ի համեմատ:

30.12.2022թ դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 159049,0 հազ.դրամ՝ 30.12.2021թվականին պլանավորված 119295,2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 39753,8 հազ. դրամով, 16.12.2022թ.դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 200375,9 հազ. դրամ ,30.12.2021թ.դրությամբ հավաքագրված 148130,1հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 52245,8 հազ. դրամով, կատարվել է 126,0%-ով, նախորդ տարվա 124,2 %-ի համեմատ:

30.12.2022թ.դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 66800,0 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 59710,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 7090,0 հազ. դրամով, 16.12.2022թ.դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 85766,1 հազ. դրամ , 30.12.2021թ. դրությամբ հավաքագրված 75373,3 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 10392,8 հազ. դրամով, կատարվել է 128,4 %-ով, նախորդ տարվա 126,2%-ի համեմատ:

30.12.2022թ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով պլանավորումը կազմել է 180985,5 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 172187,2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 8798,3 հազ. դրամով, 16.12.2022թ.դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 198162,6 հազ. դրամ , 30.12.2021թ.դրությամբ հավաքագրված 162120,2 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 36042,4 հազ. դրամով, կատարվել է 109,5 %-ով, նախորդ տարվա 94,2%-ի համեմատ:

30.12.2022թ.դրությամբ տասներկու ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով պլանավորումը կազմել է 839144,7 հազ.դրամ՝ 30.12.2021թ.պլանավորված պլանավորված 757918,4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 81226,3 հազ. դրամով, 16.12.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 747736,0 հազ. դրամ , 30.12.2021թ.դրությամբ հավաքագրված 668014,5 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 79721,5հազ. դրամով, կատարվել է 89,1%-ով, նախորդ տարվա 88.1%-ի համեմատ:
Այդ թվում համայնքների կողմից աղբահանության գծով վճարների պլանավորումը կազմել է 339091,6 հազ.դրամ՝ 30.12.2021թ.դրությամբ պլանավորված 310417,9 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 28673,7 հազ. դրամով, 16.12.2022թ.դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 276778,1 հազ. դրամ , 30.12.2021թ.դրությամբ հավաքագրված 271174,2հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 5603,9 հազ. դրամով, կատարվել է 81,6%-ով, նախորդ տարվա 87,4%-ի համեմատ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

Իրականացնել գործնական և արդյունավետ աշխատանքներ ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը առավելագույնն ապահովելու և 100% -ի հասցնելու նպատակով:

Օրակարգային վեցերորդ հարցով ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի և զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2022 թվականի ընթացքում սուբվենցիայի ծրագրերի արդյունքների և 2023 թվականի սուբվենցիաների տրամադրման հայտերի ներկայացման ընթացքը: Նա մասնավորապես ներկայացրեց, որ

Նախորդ տարիների չավարտված սուբվենցիոն ծրագրեր.

2022 թվական են տեղափոխվել 2019 և 2020 թվականների չավարտված և պետական բյուջեից համաֆինանսավորման ենթակա թվով 10 սուբվենցիոն ծրագրեր՝ 976,5 մլն դրամ արժեքով, պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 197 մլն դրամ, ինչպես նաև 2021 թվականին չավարտված և պետական բյուջեից համաֆինանսավորման ենթակա թվով 24 սուբվենցիոն ծրագրեր՝ 1.1 մլրդ դրամ արժեքով, պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 412.8 մլն դրամ արժեքով:
2022 թվականի ընթացքում 2019-2020 և 2021թ. ծրագրերից ավարտվել են 22-ը, մնացածն ընթացքի մեջ են:

2022թ. սուբվենցիոն ծրագրեր

2022 թվականին Արմավիրի մարզի 7 միավորված համայնքներից և Ֆերիկ եզդիական չմիավորված համայնքից ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել և հավանության արժանացել 41 սուբվենցիոն ծրագրեր՝ 147 ենթածրագրերով, ընդգրկելով 77 բնակավայրերը՝ շուրջ 9,013,847,466 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որից՝

- պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմում է 4.96 մլրդ դրամ,
- համայնքային բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 4 մլրդ դրամ,

- մասնավորի/բնակիչների ներդումը՝ 63.7 մլն դրամ:

16.12.2022թ. դրությամբ իրականացվող աշխատանքների ընթացքը հետևյալն է.
- սկսված ենթածրագրերի թիվը - **103**, որից՝
- ավարտված - 31
-ավարտական փուլում գտնվող - 22
- համայնքի կողմից վճարված մասնաբաժինը - **51**
- կառավարության որոշումներով հատկացված պետ.բյուջեի մասնաբաժին -**32**

2022 թվականի ընթացքում ՀՀ կառավարության թվով 14 որոշումներով Արմավիրի մարզպետարանին հատկացվել է 1,134,636,700 ՀՀ դրամ: ՀՀ կառավարության 24.11.2022թ. N 1819-Ն որոշմամբ չօգտագործված կամ տնտեսված **4,328,100** ՀՀ դրամը վերադարձվել է պետական բյուջե:

Արդյունքում, ***1,130,308,600 ՀՀ դրամից*** մարզպետարան ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 16.12.2022թ. դրությամբ կատարվել է 39 ծրագրի/ենթածրագրի պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ ***631,596,017*** ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որը կազմում է **55,9%:**

Կառավարության առաջիկա նիստերի ընթացքում սպասվում է ևս ***348,067,797*** *ՀՀ դրամի պետական բյուջեի մասնաբաժնի հատկացում, մարզի ընդհանուր գումարը կկազմի՝* ***1,478,376,397*** *ՀՀ դրամ:*

2023թ. սուբվենցիոն ծրագրեր

2022թ. հունիսի 23-ին ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով և լրացումներով պայմանավորված /N940-Ն որոշում/՝ 2023 թվականի սուբվենցիաներ ստանալու նպատակով **2022թ. հուլիսի 15-ի դրությամբ** ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել Արմավիրի մարզի 7 միավորված համայնքներից ստացված թվով **45** սուբվենցիայի հայտեր և տեխնիկական բնութագրեր՝ շուրջ **13.65** մլրդ դրամ նախնական արժեքով, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմում է 7.16 մլրդ դրամ:

Օրակարգային յոթերորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2022 թվականի ընթացքում իրականացված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկան արդյուքների մասին զեկույցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը: Նա տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված և սկսված սուբվենցիայի ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով, ՀՀ Արմավիրի մարզպետի 19.04.2022թ որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը համայնքների ղեկավարների /ներկայացուցիչների/ մասնակցությամբ պարբերաբար հսկողություն է իրականացրել կատարվող

աշխատանքների ընթացքի, ժամկետների և որակի համապատասխանության նկատմամբ:

Մշտադիտարկման աշխատանքներին մասնակցել են նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագետները:

2022թ. ՀՀ Արմավիրի մարզում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հավանությանն է արժանացել և հաստատվել 41 ծրագիր՝ 147 ենթածրագրերով:

Ըստ համայնքների դրանք են

1. Արմավիր-11 օբյեկտ,
2. Մեծամոր-41 օբյեկտ,
3. Բաղրամյան-18 օբյեկտ,
4. Փարաքար-20 օբյեկտ,
5. Վաղարշապատ-4 օբյեկտ,
6. Արաքս-15 օբյեկտ,
7. Խոյ-37 օբյեկտ,
8. Ֆերիկ-1 օբյեկտ:

103 օբյեկտների շինարարական աշխատանքները սկսված են և ընթացքի մեջ են գտնվում:

Ավարտվել և ավարտական փուլում են 53 օբյեկտներ, ընթանում է օբյեկտները շահագործման հանձնելու գործընթացը:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են տարբեր տիպի թերություններ՝ նախագծային շեղումներ, որակի անհամապատասխանություններ և այլն: Մասնավորապես՝

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի հյուսիսային մասի կոյուղու (ջրահեռացման) համակարգի կառուցման աշխատանքներում իրականացված ակնադիտական ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ որոշակի հատվածներում բացակայում էր ավազի շերտը: **Թերությունը վերացվել է:**

Խոյ համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները կատարվել է ըստ ժամանակացույցի, սակայն որոշ քանակի հենասյուներ հիմքից շարժվում էին և բետոնապատ հատվածներում առկա էին ճաքեր: **Թվով 25 հատ հենասյուներ ապամոնտաժվել և նորից տեղադրվել են:**

Արաքս համայնքի Գայ բնակավայրի համայնքապետարանի շենքի հիմնանորոգումն ընթացքի մեջ է: Ակնադիտական ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ առկա էին հատակի բետոնի և պատերի գաջի սվաղի ճաքեր, առաստաղի լայն բացվածքներ: **Թերությունը վերացվել է:**

Բաղրամյան համայնքի Բաղրամյան բնակավայրի Ա. Իսահակյան և Ա. Խաչատրյան փողոցների գազիֆիկացման աշխատանքներում առկա էին որոշ

թերություններ: Մասնավորապես հենասյուները երեք կտորից էր եռակցված, բացակայում էին ռեզինները (կլինգրինտներ): **Գործող շինարարական նորմաներով և կանոններով երեք կտորով եռակցման վերաբերյալ որևիցէ սահմանափակում նախատեսված չէ, ռեզինե տակդիրները տեղադրված են:**

Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 13ա և 27 շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներում ակնադիտական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առկա են մեծ թվով ճաքերով և բացվածքներով փայտե կանգնակներ, ինչպես նաև փայտե կոնստրուկցիաների ոչ ճիշտ համակցում: Թերությունները վերացվել են՝ ճաքած կանգնակները փոխարինվել են նորով:

Մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից հսկողություն է սահմանվել մշտադիտարկման արդյունքում արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ, որի կատարման արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվում է ՀՀ Արմավիրի մարզպետին:

Աղբահանության և սանիտարական մաքրման մասին

Համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ընթացքը նկատելիորեն բարելավվել է, և այն ավելի պատշաճ մակարդակով իրականացնելու, սանիտարահիգիենիկ իրավիճակը բարելավվելու, աղբահանության վարձավճարների կատարողական ցուցանիշների բարձրացնելու և աղբահանության ծախսերի և եկամուտների հստակ հավաքագրումն ապահովելու համար, առաջարկեց համայնքների ղեկավարներին հետևողական լինել աղբահանության եկամուտների հավաքագրման մասով և շարունակել պայմանագրեր կնքել համայնքներում առկա տնտեսավարող սուբյեկտների հետ, աղբավայրերում կուտակված աղբը շաբաթական 2 անգամ հրել հորանցք և ծածկել հողով՝ պահպանելով բնապահպանական նորմերի անվտանգության կանոնները, հետևել աղբավայրերում հակահրդեհային կանոնների պատշաճ պահպանմանը, հնարավորինս կազմակերպել աղբավայրերի տարածքների ցանկապատումը և նրանց շուրջ սանիտարական գոտիների իրականացումը. վերահսկողություն իրականացնել ինչպես, համապատասխան կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների պայմանագրերով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու, այնպես էլ համայնքների կողմից իրականացվող աղբահանության աշխատանքների նկատմամբ:

Աշոտ Հովհաննիսյանը միաժամանակ ներկայացրեց նաև 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Արմավիրի մարզում հիմնանորգվող և վերանորոգվող ճանապարհներիև դրանց ընթացքի մասին հետևյալ տեղեկատվությունը.

1. Մ-5, Երևան-Արմավիր- Թուրքիայի հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ

կմ 17+530 – կմ 18+200 670 գծմ

կմ 25+593 – կմ 29+385 3792 գծմ

կմ 32+675 – կմ 33+833 1176 գծմ

Ընդհամենը՝ **5638 գծմ:**

2. Մ-5, Երևան-Արմավիր- Թուրքիայի հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ

կմ 58+400 – կմ 63+100 **4.7 կմ**

3.Մ-5, Երևան-Արմավիր- Թուրքիայի հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհից դեպի «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության բեռնային համալիր տանող ճանապարհ-**1,7 կմ**

4.Մ-5, Երևան-Արմավիր- Թուրքիայի հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հարևանությամբ գտնվող Պտղունք գյուղի միջնակարգ դպրոցի հատվածում **վերգետնյա հետիոտնային անցումի կառուցում** և մինչև դպրոց տանող ճանապարհի բարեկարգում

5. Մ-3, Թուրքիայի հանրապետության սահման- Մարգարա- Վանաձոր- Տաշիր- Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ

կմ 10+500 – կմ 11+400 900 գծմ

6. Մ-3, Թուրքիայի հանրապետության սահման- Մարգարա- Վանաձոր- Տաշիր- Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 11+400 հատվածում գտնվող **կամրջի հիմնանորոգում**

7. Տ-3-11 /Հ-15/ Արմավիր գյուղ-Նալբանդյան-Գետաշեն-Նոր Կեսարիա- /Մ-5/

կմ 6+000 – կմ 10+000 **4 կմ**

8. Տ-3-16 Արևիկ - (Տ-3-50) - /Հ-15/ Արմավիր գյուղ

կմ 0+000 – կմ 3+600 **3,6 կմ**

9. Տ-3-52 /Մ-5/ - Ամասիա – Նալբանդյան (Տ-3-11) – Ջանֆիդա – Փշատավան - /Հ-15/ (Արգավանդ)

կմ 14+200 – կմ 18+ 400 - **4,2 կմ**

10. Տ-3-61 /Մ-5/ (Նորապատ) - /Հ-17/ - **1,7 կմ**

11. Տ-3-44 /Մ-5/ – Ծիածան – Աղավնատուն – Լեռնամերձ

կմ 0+000 – կմ 7+300 - **7,3 կմ**

12. Տ-3-18 Ակնալիճ (Տ-3-6) – Զարթոնք – Արևիկ (Տ-3-50)

կմ 0+000 – կմ 3+300 - **3,3 կմ**

13. Հ-15 /Մ-5/ (Նորապատ) – Արգավանդ - /Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ճանապարհ

կմ 0+000 – կմ 3+000 - **3,0 կմ**

Ընդհամենը՝ 40,04 կմ

Օրակարգային ութերորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը, ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններում 2022 թվական ընթացքում

իրականացված մշտադիտարկումների և Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները:
Սոնյա Բուդաղյանը իր զեկույցում նշեց, որ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2022 թվականի փետրվար-մայիս ամիսների ընթացքում կրթության ոլորտում տիրող իրավիճակի մշտադիտարկում և կազմակերպության գործունեության վերահսկողություն է իրականացվել մարզի 12 դպրոցներում՝

1. «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
2. «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ,
4. «Քարակերտի N 2 միջնակարգ դպրոց»
5. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
6. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
7. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
8. «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
9. «Հուշակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
10. «Ծաղկալանջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
11. «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
12. «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են 2019-2020, 2020-2021, 2021-2022 ուսումնական տարիների ընթացքում դպրոցների բնականոն գործունեության, ուսումնական և դաստիարակչական աշխատանքերի կազմակերպումը, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում դպրոցներում գործունեության կազմակերպման ուղեցույցի պահանջների ներդրման ու պահպանման գործընթացը:
Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են մի շարք օրենքների և իրավական ակտերի տարբեր դրույթների պահանջների կատարման խախտումներ, այդ թվում ՝

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի,
- «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի,
- ՀՀ կառավարության 25.07.2002թ. N 1392-Ն որոշմամբ հաստատված օրինակելի կանոնադրության հիման վրա կազմված՝ ուսումնական հաստատատության գործող կանոնադրության,
- ՀՀ կառավարության 14.10.2010թ. N 1391-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ի՝ ՀՀ-ում հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերի,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի

սեպտեմբերի 8-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը սահմանելու և դրանց լրացման (գործածման) կարգը հաստատելու մասին» N 20 հրամաններ,

- «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը» հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանի կատարումը,
- ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի N 24-Ն հրամանի կատարումը:

Դպրոցներում պարտադիր գործածության ենթակա տարբեր փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ և թերություններ:

Բազմաթիվ թերություններ ու բացթողումներ են արձանագրվել դպրոցների խորհուրդների աշխատանքներում (այդ թվում՝ դպրոցի զարգացման ծրագրի կատարման և տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացման առնչությամբ, առանձին դպրոցների դեպքում չեն քննարկվել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանները և հաշվետվությունները):

Մշտադիտարկման ընթացքում հիմնական և ավագ դպրոցի տարբեր դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ մարզում նշված առարկաների ուսուցման որակի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կազմելու նպատակով: Արձանագրվել է, որ առանձնապես ցածր և մտահոգիչ են «Մաթեմատիկա» առարկայի արդյունքները:

Ուսումնական գործընթացի կազմակերպման առավել ակնհայտ թերացումներից է այն իրողությունը, որ դպրոցների մանկավարժական խորհուրդների և առարկայական մեթոդական միավորումների աշխատանքում շատ քիչ մաս է հատկացված, իսկ որոշ դպրոցների դեպքում բացակայում է կրթության որակի պարբերական ուսումնասիրությունը և սահմանված չեն այդ ուղղությամբ նախատեսվող գործողությունների ու աշխատանքի ուղղությունները:

- **ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշտադիտարկման աշխատանքներ իրականացվել են նաև 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում, ուսումնասիրվել է 5 դպրոց, այդ թվում՝**

1. «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
2. «Մարգարայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
3. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
4. «Մեծամորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
5. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում (2022թ. փետրվար-մայիս ամիսներ) ուսումնասիրված 12 դպրոցների համապատասխան դասարաններում 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում (2022 թվականի

նոյեմբեր) տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից:
ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից դպրոցների տնօրեններին հանձնարարվել է սեղմ ժամկետներում վերացնել արձանագրված խախտումները և թերությունները, այսուհետ պատշաճ կազմակերպելով հաստատության ընթացիկ գործունեությունը, ուսումնական գործընթացը, և, որ ամենակարևորն է՝ սովորողների գիտելիքների ու կարողությունների օբյեկտիվ գնահատումը, նրանց առաջադիմության ու կրթության որակի ապահովումը:

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքների մասին

2022 թվական

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում ստուգվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 10 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝

- «Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Արևիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Ջրարբիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Արմավիրի Վարդան Բախշյանի անվան հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
- «Արմավիրի հ. 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
- «Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Արևաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
- «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից առավել ռիսկային է գնահատվել տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը՝ խախտումներ արձանագրվել են ստուգված 10-դպրոցներից 9-ում: Տարբեր դպրոցներում խախտումներ են արձանագրվել մանկավարժական հաստիքների, տարբեր առարկաների ուսուցիչների հիմնական կամ ժամանակավոր պաշտոնի նշանակման, ուսուցիչների մրցույթների կազմակերպման գործընթացներում: Խախտումներ են արձանագրվել նաև առանձին դպրոցներին տրված լիցենզիայով հատկացված տեղերի սահմանված միավորը գերազանցելու առնչությամբ: Ըստ խախտումների ռիսկայնության՝ երկրորդ տեղում է դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման գործընթացը, որը ուսումնասիրված դպրոցների մեծ մասում իրականացվել խախտումներով կամ էական թերություններով:
2022 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից վերստուգում է իրականցվել նաև «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ.

9 հիմնական դպրոց» և «Արմավիրի հ. 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներում, որտեղ ուսումնասիրվել է 2021 թվականին իրականացված ստուգման արդյունքում արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականի կատարումը:

Յուրաքանչյուր դպրոցի ստուգման արդյունքում կազմվել է ակտ, ԿՏՄ ղեկավարի կարգադրագրի համաձայն հաստատությունների տնօրեններին տրվել են հանձնարարականներ: Ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի գրությամբ տրամադրվել է ՀՀ Արմավիրի մարզպետին: ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով դպրոցներին տրվել են հանձնարարականներ՝ հայտնաբերված խախտումները վերացնելու, կրթության տեսչական մարմնի կողմից տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2023 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված է ստուգումներ իրականացնել մարզի ևս 20 դպրոցներում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշտադիտարկման և կազմակերպության գործունեության վերահսկողության աշխատանքները կշարունակվեն նաև 2023 թվականի ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարություններով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը՝ ներկայացնելով

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2023թ հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակի համատարած հաշվառում իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը, համաձայն որի

Յուրաքանչյուր տարվա հունվարի 1-15-ը ընկած ժամանակահատվածում համայնքներում իրականացվում է բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքներ: Իրականացվելիք հաշվառման աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու նպատակով մարզպետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի աշխատանքներին մասնակցում են բոլոր համայնքների ղեկավարները:

Հարցի կարգավորման նպատակով Ա.Ավազյանը առաջարկեց համայնքներում ստեղծել հաշվառումը իրականացնող և կազմակերպող հանձնաժողովներ, որոնց կազմում պարտադիր ընդգրկելով համայնքը սպասարկող անասնաբույժին:

Հաշվառման աշխատանքները իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության տարածքային ստորաբաժանումներից վերցնել սկզբնական հաշվառման փաստաթղթերը, հունվարի 1-15-ը ընկած ժամանակահատվածում ճշգրիտ իրականացնել կենդանիների հաշվառումը և ամենաուշը 2023թ հունվարի 15-ը ամփոփ հաշվետվությունը ներկայացնել վիճակագրական ծառայությանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ոռոգման համակարգի խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ հայտարարությամբ

Ա.Այվազյանը նշեց, որ մարզում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործում՝ որպես արհեստական ոռոգվող երկրագործության տարածք, առաջնահերթ նշանակություն ունի ոռոգման համակարգերի կառուցման, վերանորոգման և մաքրման աշխատանքների իրականացումը: Առկա իրավիճակը պահանջում է ոռոգման համակարգը սպասարկողներին և ջրօգտագործողներին առավել կազմակերպված ու բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը և կորուստները հասցվեն մինիմումի: Մարզում ոռոգումը իրականացվում է Թալինի, Արմավիրի և Ստորին Հրազդանի մայր ջրանցքներով, 233,3կմ երկարությամբ միջտնտեսային և 4981,2 կմ երկարությամբ ներտնտեսային ցանցի,338 խորքային հորերի և 62 պոմպակայանների միջոցով, շուրջ 29 հազար ջրօգտագործողներին մատակարարելով տարեկան միջին հաշվով 240-260 միլիոն խորանարդ մետր ոռոգման ջուր: Եթե անցած տարիներին տարբեր վարկային կազմակերպությունների և դրամաշնորհների միջոցով վերանորոգվել են մայր ջրանցքները և միջտնտեսային ջրանցքների զգալի մասը, սակայն դեռևս անմխիթար է վիճակը ներտնտեսային ցանցերում, որոնք հիմնականում կառուցվել են խորհրդային ժամանակահատվածում և ներկայումս գտնվում են քայքայված և ոչ բարվոք վիճակում, որի պատճառով ներտնտեսային ցանցում կորուստները հասնում են 25-30տոկոսի, եթե ոչ ավելի: Իրավիճակը պահանջում է, որպեսզի այս բնագավառում ներդրումները լինեն մշտական և կանոնավոր: Մարզում գյուղատնտեսական արտադրությունը տուժում է հատկապես այն տարիներին, երբ տարին բնութագրվում է սակավաջուր կամ հայտարարվում է երաշտ: Նման իրավիճակներից զերծ մնալու, ինչպես նաև կլիմայի գլոբալ փոփոխությունը հաշվի առնելով լրացուցիչ ջրային պաշարների ստեղծումը մեր համար դառնում է հրամայական պահանջ: Մարզում ոռոգման ջրի սակավության և բացակայության, ոռոգման ցանցի բացակայության պատճառով չի մշակվում շուրջ 10200հեկտար: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է կառուցել և վերանորոգել ներտնտեսային ցանցերը,հորատել և վերանորոգել խորքային հորերը, պոմպակայանները և մարզում կառուցել ջրամբարներ:

Այդ նպատակով համագործակցության կոչ արեց համայնքներին և ջրօգտագործողների ընկերություններին, որպեսզի համատեղ գույքագրեն ոռոգման ջրի պատճառով չմշակվող հողատարածությունները, նախանշեն դրանց լուծման ուղիները և այն ընդգրկեն համայնքի զարգացման սուբվենցիոն ծրագրերում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը իր հայտարարությամբ անդրադառնալով համայնքների 2023 թվականի բյուջեների հաստատման գործընթացին համայնքների ղեկավարներին առաջարկեց լինել հետևողական և պատասխանատու ՀՀ Արմավիրի մարզի համայնքների 2023 թվականի բյուջեների հաստատման ընթացքի և դրանք սահմանված ժամկետներում ՀՀ Արդարադատությաւն նախարարություն ներկայացնելու հարցում:

դ/ Սննդամթերքի փողոցային /բացօթյա/ առևտրի նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ հայտարարությամբ Հայաստանի Հանրապետության Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի

պետ Ալեքսան Մկրտչյանը նշեց, որ կապված առաջիկա տոնական օրերի առևտրի առավել ակտիվացման հետ, անհրաժեշտ է խիստ ուշադրության կենտրոնում պահել փողոցային /բացօթյա/առևտրի հետ կապված գործընթացները, առաջարկելով համայնքների ղեկավարներին համատեղ և համագործակցված աշխատանքներ իրականացնելով պայքարել այդ ամենի դեմ:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

X

ՄԱՐԶՊԵՏ՝
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան